

ԱՐՈՒՄՅԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մատենադարանի աշխատակից

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՄՐ. 7378 ՁԵՌԱԳՐԻ

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՅ

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները հարուստ են միջնադարյան մատյանների գրանյութ պատրաստող, գրիչ, ծաղկող, կազմող և վերանորոգող հայ վարպետների հիշատակագրություններով, որոնց հաղորդած արժեքավոր տեղեկությունները հնարավորություն են տալիս գաղափար կազմել տվյալ ժամանակաշրջանի մշակույթի, ձեռագրական, կազմարարական և վերանորոգման աշխատանքների, ինչպես նաև ձեռագրերի հետագա նակատագրերի, դրանց ստացող և տնօրինող անձանց մասին:

Բնական աղետներն ու պատերազմները, հետագա պահպանման անբավարար պայմանները՝ խոնավության և ջերմաստիճանի անկայունությունը, ինչպես նաև ժամանակը դարձել են մեզ հասած ձեռագրերի վնասման ու փայփայման, գունափոխման և դրանց նախնական տեսքի ձևափոխման հիմնական պատճառը: Ուստի մեզ հասած ձեռագրերի մի մասը մեր օրերը հասնելու համար պարտական է հետագա ստացողներին, փրկողներին, գնողներին և հատկապես նորոգողներին:

Վնասված ձեռագրերի նորագման աշխատանքները կատարել են միջնադարյան հայ վարպետները, որոնք մագաղաթը, թուղթը, դրանց բնագրերն ու մանրանկարները լրացրել, հնարավորին չափ վերանորոգել և վերստին կազմել են: Իսկ այն ձեռագրերը, որոնք մաշված, փտած ու փայփայված են եղել այն չափ, որ հնարավոր չէր այլևս նորոգել, հանձնել են հողին «հանգուցյալի» արարողությամբ:

Այդպիսի նակատագիր պետք է ունենար Մատենադարանի հմր. 7378 ձեռագիրը: Այն Ավետարան է՝ գրված 1290 թ. Սյունիքում: Գրիչը և ծաղկողը ֆահանա Հովհաննեսն է: Ձեռագիրը բավականին մեծ չափերի է, ունի վառ գույներով, ոսկով նկարազարդ կիսախորաններ և լուսանցազարդեր: Գրչի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Ավետարանի պատվիրողն ու ստացողը ռմմ ձերունի Զանդարն է:



«Արդ ցանկացող եղեալ սմա րարեպաշտ եւ աստուածասէր ձերունի այս, որ յորջորջի Զանդար, եւ գրել զսա յիշատակ իւր և ծնաւդաց իւրոց...»

Եւ արդ, շնորհիւն Աստուծոյ սկսաւ և ...կատարեցաւ ձեռամբ... Յովհաննէսի և ծաղկեցաւ և կազմեցաւ...

Ի թուականութեանս Հայոց ՋԼԹ (1290), ի կաթողիկոսութեան տեառն Ստեփանոսի և ի թագաւորութեան Հայոց Հեթում, ի եպիսկոպոսութեան /// մեծի մ///րի, որ կոչի ///...¹: Ավետարանի նակատագրի երեքդարյան ժամանակահատվածը մնում է անհայտ: Սակայն ձեռագրի նորոգման աշխատանքների ուսումնասիրությունները քերում են այն եզրահանգման, որ հենց այս հատվածին պետք է վերագրել ձեռագրում պարզորոշ առանձնացնող գրիչ Վարդանի կատարած աշխատանքները և նրան պատկանող հետևյալ հիշատակագրությունը. «զՎարդան մինակեց յիշէ ի Տէր»²:

¹ Մ. Մաջուդի անվան Մատենադարան, ձեռ. հմր. 7378, էջեր 278բ, 278ա:

² Նույն տեղում, էջ 25ա:



260ագրի 180ր և 219ա էջերը

Վերջինս սև թանաքով վերստին անցել է որոշ թերթերի վնասված բնագրերի վրայով՝ ընթեռնելի դարձնելով թափված թանաքի հագիվ նշմարվող հետքերը: Նրան են պատկանում նաև ցրվացանկում կատարված կարմիր թանաքով լրացումներն ու մանրանկարների, լուսանցադարձի վերստին գծանկարման ու գունավորման մասնակի աշխատանքները:

Ի տարբերություն ճախորդ համեստ և միայն գրչի անունը լուսաբանող հիշատակագրության, Ավետարանի հաջորդ հիշատակարանը, գրված 1579 թ. վերանորոգող վարպետ ֆահանա Միֆայելի ձեռքով, հարուստ է ձեռագրի վիճակը նկարագրող, նրա հետագա ճակատագիրը տնօրինող, նորոգման աշխատանքների նյութապես օժանդակող և այն իրականացնող անձանց անուններով և այլ մանրամասնություններով:

Վերոհիշյալ հիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ Ավետարանը նորոգվել և նվիրաբերվել է «Ի վայելումն Աուրբ Ահարոն եկեղեցւոյն»³, որի սպասավորը հենց ինքը վերանորոգող վարպետ ֆահանա Միֆայելն է: Ահա հիշատակարանից բերված նրա կենսագրական մի ֆանի մանրամասներ:

«Միֆայելիքս գերի եղայ...

Աւտար աշխարհ վըտարեցայ...

Մերկիկ բռկիկ եմ ես հիմայ.

Գըլուխ ի րաց առջև նորայ.

Ի հեռագոյն կանգնիմ հիմայ.

Լալով ասեմ ես Հայր մեղայ...»⁴:

³ Նույն տեղում, էջ 281ա և թղթն պահպանակ 1:

⁴ Նույն տեղում, էջ 279:

Սակայն վերադառնալով Ավետարանի վերանորոգման հիշատակարանին. «Աստուծաւոր յանգ ելեալ կատարեցաւ, նորոգեցաւ և կազմեցաւ զանձն աստուծոյն ...ի թուականութեան Հայոց ՌԻԸ (1579), յուլիս ամսոյ 14, (31)...»⁵:

Այնուհետև ներկայացվում են նորոգման աշխատանքներին նախորդող դեպքերը, որից տեղեկանում ենք, որ այդ աշխատանքները կազմակերպվում են ում հայր Վարդանի որդի Սարգիս Հալլանցի անմիջական միջամտությամբ, որը «...տեսաւ սուրբ Աւետարանս խիստ փտած էր. թաղիլու եղել էր, իր հոգւոյն խեղճ թըլաց, կանգնեցաւ և յորդարեց զամենեկնսն...»: Շնորհիվ նրա դադարեցվում է թաղման արարողությունը: Հավաքվում են, ժողով անում, խարն անում, ինչ որ անհրաժեշտ է՝ գնում ու տալիս. «...ինձ ...Միքայելիս ... և ձեռնարկեցի և կատարեցի, զթաղիլուն կազմեցի, զմեռացն կենդանացուցի, այս էր մեր կարն...»⁶:

Ինչպես երևում է, նորոգման ժամանակ ձեռագրի հին կազմը փոխարինվել է նորով և այդ տեսքով հասել մեզ: Կաշեպատ է, միջուկը՝ տախտակ, աստաղը՝ կապույտ կտավ: Թիկունքը ունի բավականին մեծ նեղվածներ, որոնք առաջացել են գրքի մեծածավալության, տախտակների ծանրության և կաշվի չորության պատճառով: Ունեցել է նաև կաշվե երեք կապեր, սակայն գրքի չափերի համեմատ նորոգողը դրանք նեղ, բարակ և բավականին նուրբ է պատրաստել (երևում է կազմի վրա պահպանված մնացորդներից):

Նույն հիշատակարանի հաջորդ մասը վերաբերվում է բուն նորոգման աշխատանքներին, որին մասնակից է եղել նաև Միքայելի կինը՝ Համեստը: «...Յիշեսցիք ... զմեղապարտ Միքայել անարժան քահանայս՝ զկազմող և զարդարող սորայ, և զՀամեստի՝ ամուսինն իր իրիցկիցն յիշեսցիք ի Տէր, որ շատ աշխատեցաւ սուրբ Աւետարանիս աւալային և նիշանստակ եփելու և գրեմս ձեռք տալու, և ապրըշում ալըրելու և շրագին պոռնկվիտքն կարելու, և շիրազն խաւրթում մի ըստ միոյքէ ձեռք տուելու...»⁷:

Ձեռագրի մանրագին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձեռագրի թերթերը կազմից պահպանելու համար, որպես պահպանակ օգտագործվել է այլ ձեռագրի նուսալիզու երկու մագաղաբյա թերթեր: Բացի դրանից, ավելացվել են թղթե երեք թերթեր Ավետարանի նկարազարդ, բայց խիստ ֆայֆաված առաջին էջը կազմի և մագաղաթե պահպանակի անմիջական շփումից պահպանելու համար: Արանք կատարում են կրկնակի պահպանակի դեր:

Ընդհանրապես ձեռագրում մանրանկարների ոսկու և ներկաշերտի հետագա կորուստներից խուսափելու համար, նորոգողը այդ էջերը նախորդից մեկուսացրել է նրանց միջև մեկական թղթե պահպանակ ամրացնելով: Նշենք նաև, որ այս պահպանակ-թերթերը իրենց վրա կրում են Տիրոջ աջը պատկերող միևնույն լուսադրոշմը:

Քանի որ պրակների մեջքի մասերը՝ արմատամասերը, խիստ ֆայֆաված ու մաշված են եղել, և քացառվում է դրանց կարելու, իրար հետ ամրացնելու հնարավորությունը, ուստի նորոգողը երեքից չորս սանտիմետր լայնությամբ թղթե ժապավենի օգնությամբ, զույգ առ զույգ, արմատամասի լրիվ երկայնքով նորոգել և ամրացրել է այդ պրակների թերթերը՝ քացառությամբ որոշ թերթերի, որոնց

⁵ Նույն տեղում, էջ 280բ:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 280ա:

ամրացումները հրկեղմանի են (այստեղ հաշվի է առնված փայլավածության աստիճանը)⁸:

Բացի բնական մանապարհով կրած կորուստներից, ձեռագրերը վնասվել և էական ձևափոխություններ են կրել նաև վերամշակման ժամանակ: Մեր օրինակում րացի այն, որ նորոգելիս չի պահպանվել նախկին կազմը, հեթաղորմ ենք նաև, որ չորրորդ քերթը հզրից կտրելով հավասարեցվել է մյուսների չափերին, որի պատճառով լուսանցադարձը կիսով չափ կորուստ է կրել:

Հինգերորդ էջից սկսած մինչև ձեռագրի վերջին էջը փայլաված և մաշված թղթի մասնակի ամրացումների կողքին հանդիպում ենք նաև ցեցակեր վնասվածքների: Սրանք նորոգվել և ամրացվել են քավականին վարպետորեն՝ չհաստացնելով և չխախտելով թղթի այդ տեղամասի նկուղությունը:

Ավետարանի 38, 39 և դրանց հաջորդող մյուս թերթերի կանաչ գույնով ներկված հատվածների վրա երևում են թղթի լրիվ կամ մասնակի կորուստներ, մոխրացված ճեղքեր՝ շրջապատված քաջ մոխրականաչավուն հետքերով:

Հայտնի են, որ միջնադարյան ներկերն ու թանաքները, որոնց պատրաստման քաղաղրատմանը բերվում են շատ ձեռագրերում, ունեն քուսական, կենդանական և ֆիմիական ձագում: Դրանցից կանաչ գույնը ստացել են ծաղիկներից՝ հիրիկից և շուշանից, հալ փաթից, շեկ պղնձից՝ փայլաված ֆացախաթթվում և այլն⁹:

Մենք ենթադրում ենք, որ ձեռագրում օգտագործվել է կանաչ գույն ստանալու ֆացախաթթվում փայլաված շեկ պղնձի տարբերակը: Ընդհանրապես ֆացախաթթվի փոխադրեցությամբ երկաթից, պղնձից ստացվող ներկերն ու թանաքները օդի փոխ-ինչ բարձր խոնավության առկայությամբ փայլալիչ ազդեցություն են թողնում գրանյութի՝ թղթի, մագաղաթի վրա: Նմանօրինակ երևույթի հանդիպում ենք Տայֆում և, մասնավորապես, Ղրիմում գրված ձեռագրերում:

Խոսելով ձեռագրի մանրանկարների և լուսանցադարձերի վրա հանդիպող վառ և կարծես սկզբնական թարմությունը պահպանած մնացած գույների մասին, նշենք, որ դրանց կրած կորուստները համարյա աննշան են:

Նույնը չի կարելի ասել թանաքի համար: Ձեռագրի թղթի մակերեսի վրա տեղ-տեղ մնացած օւլայի հաստ շերտի մնացորդները վկայում են այն մասին, որ վերամշակման ժամանակ թղթի հրկեղմանի օւլայումով նորոգողը միանգամից կատարել է փայլաված թղթի, ոսկու և ներկաշերտի, ինչպես նաև թափվող թանաքի ամրացումները: Այն հավանաբար իրականացվել է վրձնի օգնությամբ, որի պատճառով թուլացած թանաքաշերտի մասնիկները տարածվել են թերթի ամբողջ մակերեսով՝ նրան տալով քաջ վարդագույն երանգ: Սա ավելի պարզորոշ կարելի է տեսնել 229, 230 թերթերի վրա:

Նշենք ևս մի փաստ, ինչպես նորոգողն է նկատել. «...աւսլային վրայ գիր չի գալ ան այլ կու գրեմ հանց գիտեմաք»¹⁰: Զգուշացնելով մեզ՝ իրենից հետո եկող մյուս վերամշակողներին չչարաշահել օւլան գրանյութը մշակելիս:

Ձեռագիրը ունի նաև մեր օրերի մասնակի նորոգումներ: Այն իրականացվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ վերամշակման քաճեի աշխատակիցների կողմից, 1971 թ.:

⁸ Նույն տեղում, էջեր 1, 12, 276, 277, 278.:

⁹ Ա. Խ. Հարությունյան, «Ներկերը և թանաքները Ռին Ռայկական ձեռագրերում», Երևան, 1941 թ., էջեր 29, 65, 87:

¹⁰ Մատենադարան, ձեռ. Ռմբ. 7378, էջ 281ա: